տութեան Տ. Գրիգորի կաթուղիկոսի ամենայն Հայոց (Մուսաբէկեանցն է) . . . Աջ Ս. Լուսաւորչին մերոյ Գրիգորի . . . անյայտ եղև, ոչ գիտեմք թէ գողացաւ և ոչ գիտեմք՝ ինքն զինքն ծածկեց, և ի մեծ նեղութիւն կան և ի տրտմութիւն Հայոց ազգս վասն այս պատճառի. և զկաթուղիկոս Գրիգոր բաղում չարչարեցին, և այլ եպիսկոպոսք ընդ նմա վասն Աջին Լուսաւորչին, և ոչ գտին զնա. որ յուսամք ամենասուրբ Հոգին Աստուած, զի յայտնեսցէ զԱջ Ս. Լուսաւորչին մերոյ . . .», Նոյն տարին մի այլ յիշատակարանի մէջ գրուումէ «ի Հայրապետութեան մեծի Աթոռոյն, որ էր ի Սիս խափանեցաւ, զի զաջն Ս. Լուսաւորչին անտի գողացան, և յամս երկուս ազգս Հայոց անտէրունչ մնացի դառն և ի չար ժամանակիս . . .», Այս տեղեկութիւններից երևումէ, որ Սսի աթոռի անկման պատճառներից մէկն այն է, որ Ս. Աջն այլևս այնտեղ չէր. սակայն ազգի վիշտը, որ զգումէին ամէնքը, շուտով փարատուեցաւ, որովհետև նոյն յիշատակարաններն հակիրճ յայտնումեն թէ «զԼուսաւորչի աջն ի Սսոյ գողացան և բերին յԷջմիածին զԽորվիրապայ Հայր տէր Կիրակոս կաթուղիկոս օրհնեցին։» * Ս. Աջի Վաղարշապատում յայտնուելու պատմութիւնը շատ պարզ չէ, տարօրինակ դարձու-

* Նոտ. Հ. 125, 125, 126.